<<ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-19/07

ք. Ստեփանավան «21» փետրվարի 2019 թ.

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Սմարթլայն>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 514025 /հինգ հարյուր տասնչորս հազար քսանհինգ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[3]

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1 ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության ՀՀ900256101016 ՀՎՀՀ 06954104	<<Սմարթլայն>>ՍՊԸ ք.Երևան, Վարդանանց 110 <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ ՀՀ163007031509 ՀՎՀՀ01548908
_____ (ստորագրություն) Կ.Տ.	_____ /ստորագրություն/ Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[3] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

Հավելված
«21» փետրվարի 2019 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
Տես ներքևում	Տես ներքևում	Տես ներքևում	Տես ներքևում	Տես ներքևում	Տես ներքևում	Տես ներքևում	Տես ներքևում	Տես ներքևում	հ. Ստեփանավան Ս.Սարգսյան փ/շ/ 1	Տես ներքևում	2019թ. փետրվար-դեկտեմբեր 15

Չափաբաժինների համար	(CPV)	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ
1	30197622	Թուղթ /A4 ֆորմատի (21x29.7)	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ.:	տուփ	156	1550	241800
2	30197231	Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ (հաստությունը 25-40 միկրոն)	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորություն	հատ	1300	8	10400
3	30197232	Թղթապանակ / արագակար, թղթյա	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 210x297 մմ ձևաչափի թերթերի համար	հատ	160	60	9600
4	30197234	Թղթապանակ /	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով,	հատ	88	620	54560

		թղթապանակ կոշտ կազմով	համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:				
5	30197235	Թղթապանակ՝ամրակով	Թափանցիկ թղթապանակ նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար: 	հատ	30	150	4500
6	30192121	Գրիչ / գնդիկավոր	Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի	հատ	175	25	4375
7	30192128	Գրիչ / գելային	Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել)	հատ	125	80	10000
8	30199420	Թուղթ նշումների համար/ սոսնձվածքով	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, դեղին, չափսը՝ 90մմx90մմ	հատ	88	140	12320
9	39263200	Գրասենյակային գիրք, մատյան	Համապատասխան ձևաչափերի և տարբեր չափերի: (70 - 200) էջ, տողանի, սպիտակ էջերով:	հատ	30	700	21000
10	30197321	Կարիչ (ստեպլեր)	Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	10	650	6500
11	30192710	Սոսնձամատիտ, գրասենյակային	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար	հատ	30	140	4200
12	30197220	Թղթի ամրակներ(սկրեպ)	Թղթի ամրակներ (սկրեպ) թղթերը ամրացնելու համար:	տուփ	20	120	2400
13	30192136	Մատիտ գրաֆիտե միջուկով	Հասարակ սև կամ գունավոր, համապատասխան կարծրությամբ	հատ	66	30	1980
14	30197111	Կարիչի մետաղալարե կապեր/ փոքր	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:	տուփ	70	50	3500
15	39292510	Քանոն, պլաստիկ	Ուղիղ քանոն, գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը, 30 սմ, պլաստմասե:	հատ	20	100	2000
16	30192114	Թանաք, կնիքի բարձիկի համար	Թանաք կնիքի բարձիկի համար:	հատ	10	120	1200
17	30141200	Հաշվասարք (կալկուլյատոր) գրասենյակային	12 նիշանի սեղանի (21X294)սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող	հատ	10	1850	18500
18	39263510	Սեղմակ (կլիպս) / փոքր	Մետաղական, լայնությունը 19 մմ	հատ	50	10	500

19	39263520	Սեղմակ (կլիպս) / միջին	Մետաղական, լայնությունը 25 մմ	հատ	80	18	1440
20	39263530	Սեղմակ (կլիպս) / մեծ	Մետաղական, լայնությունը 32 մմ	հատ	70	25	1750
21	30192100	Ռետին հասարակ	Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	հատ	28	50	1400
22	30192133	Սրիչ սովորական	Սրիչ գրաֆիտե մատիտի համար	հատ	15	60	900
23	30197332	Դակիչ քանոնով (միջին)	Ծակոտիչ գրասենյակային, մինչև 36 թերթ դակելու համար, քանոնով	հատ	7	2000	14000
24	39241210	Մկրատ / Գրասենյակային	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասսայե բռնակով, 18 սմ երկարությամբ:	հատ	9	200	1800
25	22811130	Տետր 24 էջ	Ընդհանուր տետր գծավոր և(կամ) քառակուսի: Թերթերի քանակը՝12 էջ, չափերը 148 x 210 մմ: Չափման միավորը՝ հատ:	հատ	40	120	4800
26	30192160	Բաղադրանյութ / շտրիխ	Ջնջիչ, 12մլ:	հատ	20	180	3600
27	30234300	CD դիսկ	CD Դատարկ սկավառակ, առանց տուփի	հատ	70	100	7000
28	30234400	DVD դիսկ	Դատարկ սկավառակ առանց տուփի, DVD DVD-RW	հատ	20	140	2800
29	31440000	Մարտկոց՝ 1.5V	Մարտկոց (Էլեմենտ՝ մեծ) Տարբեր գույների,  1.5 V	հատ	40	130	5200
		Ընդամենը					**454025**
			ՔԿԱԳ-Ի ՀԱՄԱՐ				
1	30192121	Գրիչ / գնդիկավոր	Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի	հատ	50	25	1250
2	30192128	Գրիչ / գելային	Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել)	հատ	30	80	2400
3	30192136	Մատիտ գրաֆիտե միջուկով	Հասարակ սև կամ գունավոր, համապատասխան կարծրությամբ	հատ	21	30	630
4	30197232	Թղթապանակ / արագակար, թղթյա	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 210x297 մմ ձևաչափի թերթերի համար	հատ	30	60	1800

5	30197235	Թղթապանակ՝ամրակով	Թափանցիկ թղթապանակ նախատեսված A4 ֆորմատի թղթերի համար:	հատ	20	150	3000
6	30197234	Թղթապանակ / թղթապանակ կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	12	620	7440
7	30192100	Ռետին հասարակ	Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	հատ	10	50	500
8	39241210	Մկրատ / Գրասենյակային	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասսայե բռնակով, 18 սմ երկարությամբ:	հատ	2	200	400
9	30199420	Թուղթ նշումների համար/ սոսնձվածքով	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, դեղին, չափսը՝ 90մմx90մմ	հատ	12	140	1680
10	30197622	Թուղթ / A4 ֆորմատի (21x29.7)	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ:	տուփ	26	1550	40300
11	30197111	Կարիչի մետաղալարե կապեր/ փոքր	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ:	տուփ	12	50	600
		Ընդամենը					**60000**

**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2019թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Թուղթ /A4	տուփ	1550	39	60450	78	120900	117	181350	156	241800	**156**	**241800**

	ֆորմատի (21x29.7)												
2	Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ (հաստությունը 25-40 միկրոն)	հատ	8	265	2120	650	5200	975	7800	1300	10400	**1300**	**10400**
3	Թղթապանակ / արագակար, թղթյա	հատ	60	35	2100	80	4800	120	7200	160	9600	**160**	**9600**
4	Թղթապանակ / թղթապանակ կոշտ կազմով	հատ	620	16	9920	44	27280	66	40920	88	54560	**88**	**54560**
5	Թղթապանակ՝ ամրակով	հատ	150	10	1500	20	3000	26	3900	30	4500	**30**	**4500**
6	Գրիչ / գնդիկավոր	հատ	25	35	875	85	2125	130	3250	175	4375	**175**	**4375**
7	Գրիչ / գելային	հատ	80	25	2000	60	4800	95	7600	125	10000	**125**	**10000**
8	Թուղթ նշումների համար/ սոսնձվածքով	հատ	140	16	2240	44	6160	66	9240	88	12320	**88**	**12320**
9	Գրասենյակայի ն գիրք, մատյան	հատ	700	10	7000	20	14000	25	17500	30	21000	**30**	**21000**
10	Կարիչ (ստեպլեր)	հատ	650	3	1950	6	3900	9	5850	10	6500	**10**	**6500**
11	Սոսնձամատիտ , գրասենյակայի ն	հատ	140	6	840	15	2100	23	3220	30	4200	**30**	**4200**
12	Թղթի ամրակներ(սկրեպ)	տուփ	120	6	720	12	1440	18	2160	20	2400	**20**	**2400**
13	Մատիտ գրաֆիտե միջուկով	հատ	30	16	480	32	960	48	1440	66	1980	**66**	**1980**
14	Կարիչի մետաղալարե կապեր/ փոքր	տուփ	50	17	850	38	1900	54	2700	70	3500	**70**	**3500**
15	Քանոն,	հատ	100	7	700	12	1200	15	1500	20	2000	**20**	**2000**

	պլաստիկ												
16	Թանաք, կնիքի բարձիկի համար	հատ	120	3	360	6	720	9	1080	10	1200	**10**	**1200**
17	Հաշվասարք (կալկուլյատոր) գրասենյակայի ն	հատ	1850	4	7400	7	12950	10	18500	10	18500	**10**	**18500**
18	Սեղմակ (կլիպս) / փոքր	հատ	10	15	150	30	300	43	430	50	500	**50**	**500**
19	Սեղմակ (կլիպս) / միջին	հատ	18	14	252	40	720	60	1080	80	1440	**80**	**1440**
20	Սեղմակ (կլիպս) / մեծ	հատ	25	14	350	39	975	59	1475	70	1750	**70**	**1750**
21	Ռետին հասարակ	հատ	50	4	200	14	700	21	1050	28	1400	**28**	**1400**
22	Սրիչ սովորական	հատ	60	6	360	12	720	15	900	15	900	**15**	**900**
23	Դակիչ քանոնով (միջին)	հատ	2000	1	2000	2	4000	5	10000	7	14000	**7**	**14000**
24	Մկրատ / Գրասենյակայի ն	հատ	200	0	0	3	600	6	1200	9	1800	**9**	**1800**
25	Տետր 24 էջ	հատ	120	8	960	21	2520	36	4320	40	4800	**40**	**4800**
26	Բաղադրանյութ / շտրիխ	հատ	180	3	540	10	1800	15	2700	20	3600	**20**	**3600**
27	CD դիսկ	հատ	100	16	1600	36	3600	54	5400	70	7000	**70**	**7000**
28	DVD դիսկ	հատ	140	4	560	10	1400	14	1960	20	2800	**20**	**2800**
29	Մարտկոց՝ 1.5V	հատ	130	8	1040	20	2600	30	3900	40	5200	**40**	**5200**
Ընդամենը				X	**109517**	X	**233370**	X	**349625**	X	**454025**	X	**454025**
ՔԿԱԳԻ ՀԱՄԱՐ													
1	Գրիչ / գնդիկավոր	հատ	25	12	300	27	675	42	1050	50	1250	**50**	**1250**
2	Գրիչ / գելային	հատ	80	7	560	15	1200	23	1840	30	2400	**30**	**2400**
3	Մատիտ գրաֆիտե միջուկով	հատ	30	6	180	9	270	12	360	21	630	**21**	**630**

4	Թղթապանակ / արագակար, թղթյա	հատ	60	6	360	14	840	22	1320	30	1800	**30**	**1800**
5	Թղթապանակ՝ամրակով	հատ	150	4	600	8	1200	14	2100	20	3000	**20**	**3000**
6	Թղթապանակ / թղթապանակ կոշտ կազմով	հատ	620	3	1860	6	3720	9	5580	12	7440	**12**	**7440**
7	Ռետին հասարակ	հատ	50	2	100	2	100	2	100	10	500	**10**	**500**
8	Մկրատ / Գրասենյակային	հատ	200	1	200	1	200	1	200	2	400	**2**	**400**
9	Թուղթ նշումների համար/ սոսնձվածքով	հատ	140	3	420	6	840	9	1260	12	1680	**12**	**1680**
10	Թուղթ / A4 ֆորմատի (21x29.7)	տուփ	1550	6	9300	13	20150	20	31000	26	40300	**26**	**40300**
11	Կարիչի մետաղալարե կապեր/ փոքր	տուփ	50	3	150	6	300	9	450	12	600	**12**	**600**
Ընդամենը				X	**14030**	X	**29495**	X	**45260**	X	**60000**	X	**60000**

ԳՆՈՐԴ

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>>
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչության
ՀՀ900256101016
ՀՎՀՀ 06954104

_____
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Սմարթլայն>>ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
<<ՀայէկոնոմԲանկ>> ԲԲԸ
ՀՀ163007031509
ՀՎՀՀ01548908

_____
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«21» փետրվարի 2019 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			մարտ	փետրվար	հունվար	դեկտեմբեր	նոյեմբեր	հոկտեմբեր	սեպտեմբեր	օգոստոս	հուլիս	հունիս	մայիս	ապրիլ	Ընդամենը
1	30197622	Թուղթ /A4 ֆորմատի (21x29.7)			60450	80600	100750	120900	141050	161200	181350	201500	221650	241800	241800
2	30197231	Թղթապանակ պոլիմերային թաղանթ, ֆայլ (հաստությունը 25-40 միկրոն)			2120	3080	4160	5200	6000	6920	7800	8600	9520	10400	10400
3	30197232	Թղթապանակ / արագակար, թղթյա			2100	3000	3900	4800	5400	6300	7200	7800	8700	9600	9600

4	30197234	Թղթապանակ / թղթապանակ կոշտ կազմով			9920	18600	23560	27280	33480	37200	40920	47120	50840	54560	54560
5	30197235	Թղթապանակ՝ա մրակով			1500	2100	2700	3000	3300	3600	3900	4200	4500	4500	4500
6	30192121	Գրիչ / գնդիկավոր			875	1375	1750	2125	2500	2875	3250	3625	4000	4375	4375
7	30192128	Գրիչ / գելային			2000	3200	4000	4800	6000	6800	7600	8400	9200	10000	10000
8	30199420	Թուղթ նշումների համար/ սոսնձվածքով			2240	3500	4760	6160	7140	8120	9240	10220	11200	12320	12320
9	39263200	Գրասենյակային գիրք, մատյան			7000	8400	11900	14000	14700	16100	17500	18200	19600	21000	21000
10	30197321	Կարիչ (ստեպլեր)			1950	2600	3250	3900	4550	5200	5850	6500	6500	6500	6500
11	30192710	Սոսնձամատիտ, գրասենյակային			840	1400	1820	2100	2380	2800	3220	3500	3780	4200	4200
12	30197220	Թղթի ամրակներ(սկրեպ)			720	960	1200	1440	1680	1920	2160	2280	2400	2400	2400

13	30192136	Մատիտ գրաֆիտե միջուկով			480	630	780	960	1110	1290	1440	1620	1800	1980	1980
14	30197111	Կարիչի մետաղալարե կապեր/ փոքր			850	1150	1450	1900	2150	2400	2700	2950	3200	3500	3500
15	39292510	Քանոն, պլաստիկ			700	900	1100	1200	1300	1400	1500	1700	1900	2000	2000
16	30192114	Թանաք, կնիքի բարձիկի համար			360	480	600	720	840	960	1080	1200	1200	1200	1200
17	30141200	Հաշվասարք (կալկուլյատոր) գրասենյակային			7400	9250	11100	12950	14800	16650	18500	18500	18500	18500	18500
18	39263510	Սեղմակ (կլիպս) / փոքր			150	200	250	300	340	390	430	460	480	500	500
19	39263520	Սեղմակ (կլիպս) / միջին			252	396	576	720	900	990	1080	1260	1386	1440	1440
20	39263530	Սեղմակ (կլիպս) / մեծ			350	575	825	975	1125	1300	1475	1550	1650	1750	1750
21	30192100	Ռետին հասարակ			200	300	550	700	850	950	1050	1200	1300	1400	1400

22	30192133	Սրիչ սովորական			360	600	660	720	780	840	900	900	900	900	900
23	30197332	Դակիչ քանոնով (միջին)			2000	4000	4000	4000	6000	8000	10000	12000	14000	14000	14000
24	39241210	Մկրատ / Գրասենյակային			0	200	400	600	800	1000	1200	1400	1600	1800	1800
25	22811130	Տետր 24 էջ			960	1560	2040	2520	3120	3720	4320	4560	4680	4800	4800
26	30192160	Բաղադրանյութ / շտրիխ			540	900	1260	1800	2160	2520	2700	3060	3240	3600	3600
27	30234300	CD դիսկ			1600	2400	3100	3600	4200	4900	5400	5900	6400	7000	7000
28	30234400	DVD դիսկ			560	840	1120	1400	1540	1680	1960	2240	2520	2800	2800
29	31440000	Մարտկոց՝ 1.5V			1040	1560	2080	2600	3120	3640	3900	4160	4680	5200	5200
		Ընդամենը			**109517**	**154756**	**195641**	**233370**	**273315**	**311665**	**349625**	**386605**	**421326**	**454025**	**454025**

1	30192121	Գրիչ / գնդիկավոր			300	425	550	675	800	925	1050	1150	1200	1250	1250
2	30192128	Գրիչ / գելային			560	800	1040	1200	1440	1600	1840	2080	2240	2400	2400
3	30192136	Մատիտ գրաֆիտե միջուկով			180	210	240	270	300	330	360	450	540	630	630
4	30197232	Թղթապանակ / արագակար, թղթյա			360	540	720	840	960	1140	1320	1500	1680	1800	1800
5	30197235	Թղթապանակ՝ամրակով			600	900	1200	1200	1500	1800	2100	2400	2700	3000	3000
6	30197234	Թղթապանակ / թղթապանակ կոշտ կազմով			1860	2480	3100	3720	4340	4960	5580	6200	6820	7440	7440
7	30192100	Ռետին հասարակ			100	100	100	100	100	100	100	200	300	500	500
8	39241210	Մկրատ / Գրասենյակային			200	200	200	200	200	200	200	400	400	400	400

9	30199420	Թուղթ նշումների համար/ սոսնձվածքով			420	560	700	840	980	1120	1260	1400	1540	1680	1680
10	30197622	Թուղթ / A4 ֆորմատի (21x29.7)			9300	12400	17050	20150	24800	27900	31000	34100	37200	40300	40300
11	30197111	Կարիչի մետաղալարե կապեր/ փոքր			150	200	250	300	350	400	450	500	550	600	600
		Ընդամենը			**14030**	**18815**	**25150**	**29495**	**35770**	**40475**	**45260**	**50380**	**55170**	**60000**	**60000**

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>>
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ900256101016
ՀՎՀՀ 06954104

_____
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Սմարթլայն>>ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
ՀՀ163007031509
ՀՎՀՀ01548908

_____
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 3
«21» փետրվարի 2019 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«21» փետրվարի 2019 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԱՊՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն